



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

« ---» « -----» 2021թ.

N -----

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան 29 դեկտեմբերի 2021թ. թիվ 483200 հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան,


Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանը վարում է տեղեկատվություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն, որն արտացոլվում է մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքի «Տեղեկատվություն ստանալու հարցումների վիճակագրություն» ենթաբաժնում (<http://armavir.mtad.am/request/>): Հաշվետու տարում մարզպետարանը պատասխանել է 32 գրավոր հարցման:

Հարցումների վիճակագրությունը վարում է մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը: Հարցումները հիմնականում ստացվում են պաշտոնական էլեկտրոնային փոստերի միջոցով՝ զանգվածային լրատվության միջոցներից, հասարակական կազմակերպություններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից:

Հարցումների գրանցումը, շրջանառումը և պատասխանումն իրականացվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին գործավարության կարգին համապատասխան:

ՀՀ Արմավիրի մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Հերմինե Վարդանյանն է, ով բազմիցս մասնակցել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և այլ կազմակերպությունների ու հաստատությունների կողմից տեղեկատվության ազատության վերաբերյալ կազմակերպված դասընթացների և վերապատրաստումների:

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 29.12.2021 15:08:22 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հերմինե Վարդանյան

Հեռ.՝ (094) 03 50 60